

Ն Ո Ր - Գ Ա Լ Ե Տ Ո Ն Ի Ա

Պաշտօնային աշխարհագրական ընկերութիւնն ընդունեցաւ մօտերս իր մէջ ընկերակցէն Նոր-Վայետոնիոյ վրայ զանազան տեղեկութիւններ, զորոնք կը համառօտեմք հօս, համարելով թէ անձանոթ կամ քիչ ծանօթ ըլլան հասարակութեան:

Ամեն բանէ առաջ գիտնալու է որ խաղաղական այս մեծատարած կղզին Պաշտօնային տէրութեան կը վերաբերի սկսեալ 1853 ամէն. և կ'իյնայ հարաւային լայնութեան 20 և 23 աստիճանաց տակ, և ունի 161 և 162 աստիճան արեւելեան երկայնութիւն: Կղզւոյն տարածութիւնն է դժւար յայտնութիւն 122 քիլոմետր, և ի լայնութիւն 18 քիլոմետր. կարծես թէ ներքնածովեան ձկան մը դուրս ցցուած ողնայարն է, ընթանալով ի յարեմտեան հիւսիսոյ դէպ ի հարաւային արեւելք: Ծածկուած է լեռնաց զանազան շղթաներով, որք կը ձգին ընդ երկայնութիւն կղզւոյն ի հիւսիսոյ ի հարաւ: Բարձրութիւններն չափաւոր է. ամենաբարձր գագաթը հազար երկուհարիւր մետրի կը հասնի:

Եթէ ճանապարհորդաց ունեց տուած տեղեկութեանցը միտք դնելու ըլլանք, պիտի համարինք զՊաշտօնային անապատաձև ուլանս մ'ովկիանու ջրոց մէջ, ուր ճանապարհորդը կը կարծէ գտնել տեսակ մ'արքայութիւն: Եւ իրաւցնէ առաջին տեսութեամբ դիտողին աչաց կախարդիչ է կղզին, որ խոնջեալ խաղաղական ուկիա՛նու շրջապէսացաւ տեսարանաց միակերպութենէն, կը հիանայ հօս ի սուս զանազանութեան տեսարանաց: Բայց աւելի մօտենալով կը չափաւորի զարմանքը, վասն զի կը տեսնայ այն կախարդիչ տեսարանը, և կը տեսնայ երկրին աղէկութեանցը հետ նաև խղճութիւնները: Պէտք չէ մոռանալ որ ի սկզբան խաղաղականին հոսանսոց մղմամբ այս կղզիս ինչնոզ մէկ քանի գաղթականք գրկեթէ կիսամեծ էին ի քաղցոյ, հազիւ ունենալով մէկ քանի անհրաժեշտ կազմածներ, թափուրք յատեւեաց, Զրկնորսութիւնն էր իրենց միակ ապրուստը, բայց պէտք էր որ ունենային և առայն պէտք եղած կարևոր գործները: Կըրնայ ըլլալ որ այս առաջին անգամ եկողք բերած ըլլան հետերնին մէկ քանի ցորենահատ և քոքոյի պտուղներ. բայց այսու հանգեւած կղզւոյն բուսաբերութիւնն ոտն առ ոտն ձևացաւ, առ որ օգնեցին ոչ ինչ նուազ և ջրոց ընթացքը, Բայց ի սկզբան

երկիրն անընդունակ էր, բուսական խաւը դանդաղութեամբ կը ձևանար. բնութեամբ մեծամարմին ծառերն երկար առեն թփոյ մեծութեամբ մնացին. և հնդիկ ընգուզեալք որ այսօր Նոր-Վայետոնիոյ անտառաց գլխաւոր հարստութեան պատճառք են, այն անցնողութեան հասնելու համար երկար ժամանակաց պէտք ունեցան:

Նոր-Վայետոնիա կղզւոյն ձևանալուն երկու պատճառ կայ. մէկն է պարզ երկրաբանական և միւսն ինքնաբանական: Երկրաբանական պատճառն այն է որ երկրին խորը բոլոր հրաբխային և եռացական նիւթերէ կազմուած է, որք պատճառ եղան կղզւոյն ի վեր ելլելուն. ուր ամենին տուէն չի բուսնիր, ոչ ծառ, ոչ բանջարեղէն, ոչ բնաշխարհիկ և ոչ տարալաւորիկ. և վնասակար են նոյն իսկ արօրադրելի երկրներու խրամատելով զնշալուցիւն: Իսկ միւս պատճառն է ըսինք կենդանաբանակուս. վասն զի հողոյ զանազան խաւեր ի կենդանատնկոց ձևացած են, որոց վրայ նախկին բուսաբերութեան մնացորդք և կուպուտ երկաթախառն հողոյ չնդջակոյտք արօրադրելի հողոյ խաւ մ'ի վեր բարձրացուած են առաւել կամ նուազ խորութեամբ: Կղզւոյն միւս մասերը կէս մ'անբեր կէս մը բարեբեր և առաւելագոյն մասամբ անառաւներով ծածկուած են, զորս քաղցեթ անխոնջմութիւն կ'երեւայ, և ուրիշ կողմանէ երկիրն իսկ յարմար չէ ի մշակութիւն. ուրեք ուրեք արգէն փորձած են և անշահ ելած: Արօտատեղեաց ունեք մահաբերք են, և այլք հանգեւած իրենց արտաքին գեղեցիկ երևութովը գոյացական կերակուր չեն մատակարարար խաշանց, Բայց պէտք է բոլորովին սեւագոյն ներկել. կայ գրեթէ հարիւր հազար եկտարի չափ երկիր որ կը բուսցնէ արևադարձային շատ մը տունկեր, ինչպէս բամբակ, բափն, պղպեղ, և այլն:

Երկիրն որովհետև լեռնոտ է, ինչպէս ըսինք վերագոյն, հետեւաբար և բարձրալուր. բայց ըստ մեծի մասին գետոց տալալ կամ անկողինն անկատար ըլլալով, յաճախ տեղի կ'ունենան ջրոց ողողմունք, ուստի բազմաթիւ են և ճահիճք: Ասկէց զատ ունի Նոր-Վայետոնիա ուրիշ դժբախտութիւն մ'ալ, այսինքն ինչպէս յիշրուպ և յԱսիա տեղ տեղ, նոյնպէս և հօս մարախը մեծամեծ վնասներ կը հասցնեն մշակութեան, որոնք խմովին գալտի կամ արօտի մը վրայ իջնելով, կը մերկացնեն յամենայն զարգուց: Բայց այսչափը բուսական չէ. դարձեալ իրենց դիակամքն ապականելով գերկիր և զմթնոլորտ՝ բազում տարածամ

մահուց պատճառ կ'ըլլան։ Սակայն բարեբախտաբար այս հարուստն ընդհատ կը պատահի։ Կ'անցնին մինչև տասը տարի, և չերեքի որ այս անհաճոյ հիւրը։

Նոր-Վայեթոնիոյ ինչպէս նաև բոլոր հասարակածի երկիրներու մէջ, ամբողջ տարին երկու եղանակ կը բաժնուի, եղանակ անձրևաց և սաստիկ ջերմութեան և եղանակ ցամաքութեան ու ցրտութեան։ Մինչ իրենց կը տանջին 'ի սաստիկ տապոյ ամառան, մենք կը սարսուիմք յանտանիկ ցրտոյ ձմեռան։ Մինչ իրենց խոր գիշեր է, մեզի գեղեցիկ ցորեն է։ Անձրևաց եղանակը կը սկսի յունուար ամսոյ առաջին օրէն և կը վերջանայ ապրիլին։ Իսկ ցամաքութեան եղանակը կը բովանդակէ բոլոր զմնացորդ տարւոյն։ Քայց կրնայ ամենայն ոք գուշակել որ եղանակաց յաջորդութիւնը չէ յանկարծակի, և թէ մարթ է գնել երկու միջին բայց սակաւատեւ եղանակներ, որ կը ներկայացնեն զգարուն և դաշուն։

Տարւոյ մէջ միջին բարեխառնութեան աստիճանն է 22 և 23 'ի վեր քան զգերոյ նորիւրամիսն ջերմայիկ։ Արեւմեք ըսել որ 'ի միւս ամսոյ մինչև ցնոյեմբեր՝ օգոյ բոլոր օրուան մէջ քաղցրախառն ու հաճոյական է, և դով բոլոր գիշերը։ Ամենէն ցուրտ՝ յուլիս և օգոստոս ամիսներն են, և ամենէն փափ՝ յունուար և փետրուար ամիսք։

Նոր-Վայեթոնիոյ մէջ ցօղ շատ աւելի քիչ կ'իջնայ քան ուրիշ հասարակածի երկիրներ։ Փոթորիկ հազիւ երբեք կը պատահի, և այն գրեթէ միշտ ձմեռուան սկիզբը։ Վասն զի առաջին անձրևը երկար ժամանակ է 'ի վեր բոցատողը արեգական ճառագայթներէն եռացեալ հողոյ վերայ անկանելով, կը պատճառեն առատ չոգիաքուն, որ է գլխաւոր պատճառ ելիկտրութեան մթնոլորտի յամենայն կլիմայ։ Առտի փոթորիկ ամիսն յունուար ամիսն է։

Եւ երբեմն յետին աստիճանի տաք օրեր կ'ընէ, բայց քիչ անգամ կը պատահի որ քաղցրաշունչ զեփիւրն չի մեղմացնէ օդոյ ջերմութեան սաստիկութիւնը։ Եւ թէպէտ ցորեկուան ու գիշերուան ջերմութեանց մէջ եղած տարբերութիւնն ոչինչ է, բայց թէ որ մէկը պէտք եղած զգուշութիւնը չունէ կրնայ հիւսնդանալ, ապա թէ ոչ միշտ չունի գիշերը բացօթեալ անցընել։

Վալով հիմա բնակչաց, Նոր-Վայեթոնիացիք Ովկիանիոյ սեամորթից ցեղէն են։ միոթերնուն գոյնը ձաճախարհիկի սևութեամբ է։ մազերնին և ու գանգուր, իսկ ունեւերնին լայն և տափակ։ չրթունքնին խոշոր և չրիկալ է։ ճակատներն բարձր և

երկու կողմանէ դէպ 'ի ներս խոնարհած։ Վալեթոնիացիք բուն տգեղ չեն ըսուիր, մասնաւոր թէ շատերն այնպիսի չափաւ կցիալ գծագրութիւն մ'ունին, որ կրնան միշտ իշտակել շատ աշխարհաց բնակչաց հետ։ Իսկ ընդհակառակն կանանց տգեղութիւնը մի՞նչապէս համբաւեալ և առաւելուր եղած է։ որոնք գլուխնին կը գերծնէ և ականջնին ու ունեւերնին ծակծկելով՝ տգեղ և ահաւոր երևոյթ մը կ'առնուն։ Տղաք չեն հաստանիր 'ի ստնէ մինչև երեք, և երբեմն մինչև հինգ և վեց տարուան հասակնին, և ստոր գլխաւոր պատճառն ուտելից պակասութիւնն է։ Նեղութիւնք՝ որոց ենթակայ են կանայք, չափազանց աշխատութիւնք՝ որոց զատապարտեալ են, գրկմունք՝ զորս կը կրեն յաճախ իրենց ամուսնաց կողմանէն, կը մայնն ու կը պառաւեն կզանայ ժամանակէն առաջ։ Արք թէ և աւելի ուշ կը ծերանան, բայց առկաք երկարակեաց կ'ըլլան։ Եւ որովհետև ժամանակն հաշուելու սովորութիւն չունին, ուստի և ոչ իրենց տարիքը գիտեն, որով զժողովրդն կ'ըլլայ հաստատուն հաշիւ և քննութիւն մ'ընել իրենց երկարակեցութեան վրայ։

Նոր-Վայեթոնիացիք ինչպէս և բոլոր վայրերիք՝ սուր տեսանելիք և լսելիք ունին։ Թեթեւակալութ են, և կարծես թէ ջղապիղք սրունքնին ընթանալոյ համար միայն չինուած ըլլայ։ Վայեթոնիացւոց մարմնական ուժոյ պակասութիւնը կախումն ունի իրենց կերակրէն. և իրաւցնէ կերակուրնին սովորաբար յընդեղինաց կը բաղկանայ, որ մարմինը չեն օրացանալ, վասն զի արիւն չեն կազմեր։ Եւ շատակեր ըլլալուն պատճառն ալ այս է, որոց մէկ անգամուան կերածը թերևս մենք երեք կամ չորս բաժին կ'ընէինք։ Վայեթոնիացիք գիտէ կերածը, բայց չի գիտեր թէ մէկ մ'ալ երբ պիտի ուտէ։ ուստի ամեն անգամ որ յարմար առիթ կ'ունենայ ընդ զորովայն, կը ջանայ ամեն կարեկի օգուտն շահիլ անկէ։ Թէ որ առատ պտուղ կամ արմատ, և կամ թէ որ յաջող ձկնորսութիւն մ'ըրած է, ամենայն ճոխութեամբ կը վատնէ գտածն առանց վաղուան օրը մտածելու։ Իսկ թէ որ չբաւոր է՝ կը ծովապահէ լաւապիտի առթիւ սպասելով։ և կ'ըլլայ երբեմն որ ամբողջ օրեր կը ծովապահէ։

Վայեթոնիացիք իբրև մարդակեր բամբաստած է. բայց այսօր ամենեւին տեղիք չունի այդ բանը։ Աւելի յանձն կ'առնու մաշուելով մեռելի, քան այդպիսի բան գործել։ և ոչ իսկ կ'ախորժի լսել թէ իր նախնիքը մարդակեր եղած ըլլան։